



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5789

5508

Музыкальное изобретение

891.99

У-42

366

1902

mf

2003

5789

№ 14

ԴԱՐԻՔ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՀՅ. ՅԵԳՈՒԹԻՈՒԿԻՆ ԿԵԼԵՔԻՑ

(ԱՐՑԱԽՈՎԱԾ ԿՐՈՇԱԿԱ-ՀՑ)

III ԳՐ-ԲՈՅԿ

Ժ Ե Ն Ե Ւ

Հ. Յ. ՊԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՑՊԱՐԱՆ

1902

891.99

4-42

ԴԱՐԲՆԻ ԵՐԳԸ. — ՈՒԽՏԱՒՈՐԸ. — ՔԱՅԴՈՒԿԻ

ՆՈՐ ՏԱՐԻՆ

5283

# Դ Ա Ր Բ Ն Ի Ե Ւ Գ Լ

“Արի՛ փշրնմ ես քո խոփը, տանք դարբինին կոելու,  
Կոենք-կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի գէմ կուելու:  
Եղբայր հայեր, առէ՛ք խոփը, տւէք դարբինին կոելու,  
Կոել-կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու”:

ԳԱՄԱՌ-ԹԱԹԻԹԱՆ

## I

— Պէ՛չ, ել՛ք, որդիք: Աստղը լուսաբեր  
Վաղուց է սահում խաւար երկնքում,  
Նրա կաթնածիր, պլազան շողեր  
Վաղուց մայր լուսոյ ուղին են հարթում:  
Խաւարն է գողում, քունը սարսում,  
Վառ արշալոյսի գունատ կարապետ  
Սիրուն աստղեկը լոյժն է աւետում,  
Զարն իր սարսափով կորչում է անհետ:  
Պէ՛չ, ել՛ք, որդիք: Հա՛ արևելքի  
Մուալլ, հոգեմաշ քօղը պատառւեց,  
Լուսոյ ցնցուղեց անհուն երկնքի  
Խաւար կամարը մեղմիւ գունատւեց:  
Աղօթարանից հովը գրկաբաց  
Ողջոյն է բերում միջած դաշտերին,  
Եւ ծաղեկները՝ խաւարից յոգնած՝  
Նայում են լուսոյ անդրանիկ շողին:



1765-2002

93658-62

2011

(5044  
47)

Նրանց թերթիկներ իրար ականջում  
 Մեղմ փսխում են երգը վաղորդեան  
 Եւ եթերային զեփիւոի գրկում  
 Վայելում սիրոյ օրօր հաշտութեան:  
 Դէ՛չ, ելէք, որդիք: Հովիւն էլ հնչեց  
 Լացող սրնդի երգը ոլորուն,  
 Այրում մակաղած հօտն էլ շարժւեց,  
 Դիմում է դէպի դաշտերը սիրուն:  
 Երէկ երեկոյ, ուշ վերջալուսին,  
 Մեր միահամուռ մուրճերի ձայնով  
 Հրաժեշտ տւինք ծածկւող արեին,  
 Ելէք, ողջունենք նրան նոյն ձևով:  
 Սերո՞ր, քեզ մատադ, դէ՛չ վեր կաց շուտով.  
 25 գու աւագն ես, ողջ քեզ են նայում.  
 Այդպէս է ամէն ինչ ընթանում կարգով —  
 Մեծերի յետելից փոքրերն են քայլում:  
 Նայիր աստղերի սիրուն խմբերին.  
 Որը բոցավու է՝ իր յետեռում  
 Քաշում է մի շարք ուրիշ փոքրերին,  
 Ամէնքը միասին գնում են գնում.  
 Արարչութիւնն իր իմաստութիւնով  
 2ափ է սահմանել մեծին ու փոքրին,  
 Յաւիտենական իր օրէնքներով  
 Պարտը ու իրաւունք բաշխել ամէնքին:  
 Հսկայի ուժին համահաւասար  
 Նրա կրծքի տակ մի սիրտ է դրել  
 Եւ այդ վեհ սրտին վայել ու յարմար  
 Նրան Սուրբ Գործի ասպարեզ տւել  
 2ափը վերից է, լոկ գործն է վարում.  
 Ով որ շատ ունի, նա շատ է տալի,

Ներդաշնակութիւնն անխախտ է մնում,  
 Եւ կեանքը գառնում է քաղցր, բերկրալի:  
 Զեր մեծ եղբայրն արդէն վերկացաւ,  
 Պետօ, Գուրգէնիկ, Վազգէն ու Բարկէն,  
 Դէ՛չ, գուք էլ ելէք, հաւը խօսեցաւ,  
 Սար ու ձոր թնդաց թռչնոց ձայներէն:  
 Մեղմ զօղանջում է ձայնը կոչնակի  
 Կիսաքուն, գժբախտ աշխարհի համար,  
 Ինչպէս գթառատ, վշտացած ոգի,  
 Որ սուգ է ասում խեղճերին անձար:  
 Այն — ազատ ոգու ազօթքն է անբիծ՝  
 Նման բուրմունքին ցօղապատ ծաղկի,  
 Որ վեր է ձգւում տառապող երկիր՝  
 Բաղիսելու գուռը փակւած երկնքի:  
 Ելէք, սրբազն այդ մրմունջներին  
 Խառնենք մեր ազօթք, մեր յոյս ու խնդում.  
 Թո՛ղ երկինքն ուժ տայ մեր բազուկներին,  
 Ցաւն ու հառաչանք մեղմ աշխարհում:  
 Աչա ամէնքդ էլ արդէն պատրաստ էք.  
 Օրչնեալ լինիք գուք, հնազանդ որդիք...  
 Դէ՛չ, գնանք այժմ մեր գործն սկսենք,  
 Զեռք առնենք երկաթ, պողիատ ու գոռծիք:  
 Թո՛ղ արշալոյսի առաջին շողեր  
 Մեր վառ հնոցի կայծերը տեսնեն,  
 Թո՛ղ որ մեր մուրճի ուժգին հարւածներ  
 Սրբազան Գործի գալուստն աւետեն:

II

Ողջոյն ձեզ, ողջոյն, կարծրակուռ մուրճեր,  
 Մետաղեց կուած՝ մետաղն էք կրծում...

Հուժգու ձեր թափի հուժգու հարւածներ  
բարին և չարն են ծնում աշխարհում:  
Ո՞չ, ինչո՞ւ յաճախ մարդկային ձեռքում  
Դուք, անգիտակից, անարդ բռնութեան,  
Արեան, արցունքի գործիք էք դառնում,  
Մեղսակից լինում անարդարութեան:  
Կարծր մետաղը ձեր հարւածներով  
Դառնում է աչեղ զէնք բռնակալին,  
Աշխարհն է լցնում հեծեծանքներով  
Բողոքը խեղդում խեղճի շրթունքին:  
Ո՞ր չար Աստւածը բախտը մարդկային  
Ցաւի ու արեան, լացի հետ կապեց.  
Ինչո՞ւ արօրին, փոցին, մանգաղին  
Սուրն ու նիզակը նա ընկեր տւեց. . .  
Անգէտ ու անփոյթ աշխարհի բախտին,  
Անհուն դարերից ծեծում էք ծեծում,  
Զեւ ու ուժ տալիս երկաթ-պողվատին,  
Աղատ, անազատ կեանբեր սահմանում:  
Դժբախտ սարկի բազուկի շղթան  
Դուք էք շաղկապում օղակ-օղակից,  
Եւ ազատ մաքի բանտերի փական  
Դուք էք եռանգով կոռում պողվատից:  
Էլ հերիք, մուրճեր. . . Զեր հզօր թափից  
Թող այսուհետեւ հառաչի շարիք.  
Շղթան՝ թօթափած ստրկի ձեռքից,  
Փղնենք ու կունք պայքարի գործիք:  
Շղթայ չենք կոի և ոչ մի ձեռքի —  
Անազատ կեանքով շատ տառապեցինք.  
Կապանք չենք շինի և ոչ մի մաքի —  
Կաշկանդւած մաքից շատ ցաւ կրեցինք:

Խաղաղ վաստակի, սուրբ պշխատանքի  
Մենք պիտի կունք փայլուն գործիքներ.  
Խաղաղ վայելքի, արդար քրտինքի  
Մենք պիտի նւիրենք բոլոր մեր ջանքեր:  
Քայց այնտեղ ուր որ բռնութեան ձեռքից  
Հեծում է մարդը հազար ցաւերով —  
Այնտեղ լոկ սուսեր քաշենք պողվատից,  
Լոկ արեան գործիք կունք մուրճերով. . .

III

Քեզ ևս ողջո՞ն, հնոց բոցավառ,  
Որ քո բարկ ծոցում քնքոյշ խնակով  
Դուստրը երկնքի՝ լուսաւոր պայծառ  
Հուրը կենսատու՝ կրում ես սիրով:  
Երկնքից խլւած կայծն աստւածային  
Անհուն իսաւարի քողը պատառեց,  
Լոյս և զերմութիւն տւեց աշխարհին  
Եւ ճշմարտութեան նա ուղին հարթեց.  
Ի՞նչ փոյթ՝ թէ ժայռին գամւած մարդկութիւն  
Արծւի կտցով պատառած կբծով՝  
Քինոտ երկնքից հայցէր թողութիւն  
Եւ լոյսը զնէր անլուր տանջանքով:  
Մոխրում թաղւած մի հատիկ կայծից  
Հրդեհն է ծնում աչեղ բոցերով,  
Եւ ճշմարտութեան մի հատիկ շողից  
Քիւր սիրտ է վառւում սրբազան յոյզով:  
Յոգնած դարերի մոայլ շարքերում  
Կան բոցապսակ փայլուն տարիներ,  
Յոգնած մարդկութեան մոայլ անցեալում  
Կան բոցով վառւած վսեմ հոգիներ:

Նւիրական հուր... Քո կիզիչ շնչով  
Եւ մոխիր հագած սեաւոր սրտեր  
Մեղմ փոթոթւում են դառն կսկիծով,  
Եւ ալրւում, միում տանջւած հոգիներ:  
Դու ես փոթորկում ըմբոստ հոգիներ  
Վսեմ պայքարի աշեղ ժամերին.  
Դու ես խարանում անարդ ձակատներ  
Վատ դաւաճանին ու չարագործին:  
Իսկ երբ խաւարը շատ է ծանրանում  
Թշւառ մարդկութեան ցաւագար գլխին,  
Երբ չարիքի տակ չեծող աշխարհում  
Անէծք է լսում անգութ երկնքին.  
Երբ որ բռնութեան բիրտ կապանքներում  
Տառապանքներից խամրած շրթունքներ  
Եւ չեն մրմունջով սև բախտը ողբում  
Եւ դահիճների չեն լիզում ոտքեր,  
Ա՛յ, այն ժամանակ անարդ բռնութեան  
Նշաւակ դարձած ստրուկ բազուկներ  
Յուսահատ թափով ցնցում են շլթան,  
Կաշկանդւած ձեռքի փշում կապանքներ...  
Եւ շլթաների հզօր ցնցումից  
Թռչում են մէկն կայծեր անհամար,  
Ինչպէս կայծակներ ծնած ամպերից  
Դարերից իշխող պատռում են խաւար:  
Եւ Ազատութեան Սրբագան Ոգին,  
Ինչպէս փայլակը սև հորիզոնով,  
Բոցէ պսակը յաղթական ձակտին՝  
Անցնում է հպարտ, փրկարար թափով:  
Նրա ձամանչից փայլ են ստանում  
Հազար ու հազար խաւարած աչքեր,

Նրա ջերմութեամբ յոյզ են ստանում  
Հազար ու հազար թուլացած սրտեր:  
Կոյր գորութեան մէջ համր տարերքի  
Զարիքն ու բարին ընկեր են դարձած,  
Ազատ շանթերից ամպոտ երկնքի  
Աւերիչ, ինչպէս վիշապ կատաղած:  
Հրդեշն է իջնում խուլ մոմոցով  
Տուն, բնակութիւն գերեզման շինում  
Եւ մոխիրների տխուր կոյտերով  
Կեանք, երջանկութիւն յաւիտեան թաղում:  
Եւ երբ երկրի մոայլ արգանդում  
Հուրը կրծում է անդունդի պատւար —  
Ինչպէս զայրոյթը մարդկային սրտում  
Մի ելք է փնտում գեպի լոյս աշխարհ —  
Բոցերով յղի լեռները հսկայ,  
Ասես՝ մի աշեղ երկունքով բռնւած,  
Հեծում են ցաւից աշխարհի վրայ,  
Խանձւած արգանդից վիժում աւերած:  
Իրանց կատարի մոայլ բացւածքից  
Ծուխ ու բոց որձում և քարեր ժայթքում,  
Գիւլ ու քաղաքներ շինւած դարերից  
Ահաւոր թափով աւերակ դարձնում:  
Բայց և նոյն հուրը ազնիւ սրտերում  
Վէհ Ազատութեան գործօն է հզօր...  
Դէհ, թո՛ղ մեր խաղաղ այս գործանոցում  
Նա և՛ մեր ջանքը պսակի այսօր:

IV

Նայեցէք, որդիք, այս ծեր զնդանին,  
Հինաւուրց ժանդը պատել է նրան,

Ինչպէս ամօթը ստրկի ճակտին,  
Ինչպէս մութ ամպը կատարին լերան:  
Լոեղձ հայրենիքի գժբախտ օրերում  
Ա՛ է ծառայել գործիք չարութեան,  
Արեան, արցունքի սև տարիներում  
Այստեղ են ծեծել զէնքեր բռնութեան:  
Մեր խեղձ պապերը քանի տարիներ  
Իրանց ձեռներին կոել են շղթայ,  
Եւ նրանց աչբից քամւած արցունքներ  
Աւ ժանդ են կտրել զնդանի վօայ:  
Նոր է մեր կեանքը, նոր ձուլենք զնդան...  
Զուլենք մենք նրան ողջ կուռ պողվատից,  
Հաստաբեստ, փալլուն, ամուր, անսասան,  
Թո՛ղ որ չոնքայ նա մեր հարւածից:  
Մեր նոր զնդանը ձուլելու համար  
Աչա բերում եմ զուտ, կարծր պողվատ:  
Ըուրջ բոլորեցէք էլ չ'առնենք դադար.  
Զարկեցէք թափով հուժգու, անվհատ:  
Սերո՛ր, դու այստեղ կանգնիր, կենտրոնում, —  
Ամէնից ծանր մուրձը քեզ բաժին.  
Եւ միւսներդ — երկու կողմերում,  
Ամէնքիդ ուշքը դարձած զնդանին:  
Զարկեցէք, որդիք... Վառման հնոցում  
Պողվատի շերտերն իսպառ փափկել են:  
Տեսէք հա՛, ամենքն իրար են ձուլում.  
Զուր չե որ երկամը տաք-տաք կը ծեծեն:  
Զարկեցէք, որդիք... Թո՛ղ հիմքն ամրանայ,  
Թանձր կոճի մէջ նա է տեղ բռնում:  
Ամուր հիմքով չէնքն ամուր կը մնայ,  
Ինչ որ հիմք չունի, շատ վաղ է ընկնում:

Ժպտում է ժայռը հզօր մրրկին,  
Երբ որ իր հիմքը անդունդն է մխւած.  
Քամի, փոթորկի հեգնում է կաղնին,  
Երբ հաստ արմատը խորոնկ է թաղւած:  
Զարկեցէք, որդիք, զարկեցէք հիմքին.  
Թանձր կոճի մէջ նա պիտի մնայ:  
Թէ մեր հայրերն էլ հիմքով գործէին,  
Այսքան սև օրեր չէինք ունենայ:  
Հիմքը պատրաստ է, յետ տանենք հնոց.  
Թո՞ղ որ նա այնտեղ շիկանայ նորից:  
Իսկ դուք բերէք ինձ ունելիք, կոոց,  
Մի նոր շերտ կտրենք կարծր պողվատից:  
Փունք պողվատը զնդանի վրայ,  
Թո՞ղ որ երեսը հաստաբեստ լինի.  
Հնոցում պահենք հալւի ու եռայ,  
Որ մուրճերի տակ հեշտութեամբ ձուլի:  
Զարկեցէք, որդիք, ահա զնդանը.  
Այժմ երեսին իջէք հարւածներ.  
Երար թո՞ղ ձուլեն նորը և հինը,  
Թո՞ղ զանգւած կազմեն պողվատի շերտեր:  
Ինչպէս որ չէնքի գլխին է ճայթում  
Աչեզ փոթորիկ, կայծակ ու շանթեր,  
Այնպէս էլ զնդանի գլխին են իջնում  
Առողը մուրճի հուժգու հարւածներ:  
Զարկեցէք, որդիք, գլուխն ամրանայ,  
Ինչպէս սաղաւարդ զինւորի գլխին.  
Հարւածի առաջ թո՞ղ ըմբոստ մնայ,  
Ինչպէս սև ժայռը փոթորկի ժամին:  
Զարկեցէք այժմ զնդանի կրծքին,  
Պողվատի շերտը թո՞ղ պատի նրան.

Ինչպէս կուռ զբահ ընդդէմ նետերին.  
Թող նա պինդ գրկի մեր այս նոր զնդան:  
Օրհնեալ լինիք դուք, կտրիչ իմ որդիք.  
Աչա զնդանը պատրաստ է իսպառ,  
Ազնիւ ձեռների ազնիւ արդասիք,  
Նա մեր Մեծ Գործին կը լինի սատար:  
Եւ այսուհետև պէսպէս գործիքներ  
Կուենք ու կոփենք անդուլ, անդադար,  
Դուշմանը գողա, հոգանք մեր ցաւեր,  
Թող սա Սուրբ Գործին լինի միշտ սատար:  
Արել կախւեց լեռների մէջքին,  
Հօտերը սարից խաղացին դէպ ձոր.  
Մառախուղն իջաւ, իջաւ դաշտերին,  
Հօտաղ ու նախիր յետ եկան բոլոր:  
Ցած դրէք ուսից դուք էլ ձեր մուրճեր,  
Ժամն է հանգստեան նաև մեզ համար.  
Վար առեք, որդիք, կաշւէ գոգնոցներ,  
Խաւարն է գալիս պատելու աշխարհ:

V

Գարուն է, որդիք, գործի ժամանակ.  
Գործն է վերջ տալիս ցաւին ու հոգսին.  
Ով չի կամենում հեծել լծի տակ,  
Նա ուժ պիտի տայ բազկին ու մէջքին:  
Գարուն է, որդիք, ամէնքն են գործում,  
Գործն է զին տալիս մեր ցաւոտ կեանքին.  
Աւ օրը ծով է, բախտն է պակասում,  
Բախտը չէ տւած անգործ անձարին:  
Թէ ուրիշները քրտինք են թափում,  
Մենք պիտի թափենք արիւն ու քրտինք...

Ով երկունք ունի, նա ջանք է անում,  
Երկունքի ցաւը օրհնել է երկինք:  
Ողջ տիեզերքը երկունք է վաստակ,  
Ցաւն է հիմունքը պաղաբերութեան,  
Կեանքի երկունքը խորն է, անյատակ,  
Նրա ծնունդը պէս-պէս անսահման:  
Ցաւով է ծնւռում ծիլը ծաղիկի  
Հողի տակ պառկած փոքրիկ սերմից.  
Ցաւով է բացւռում թերթը կոկոնի  
Ռւռած, բողբոջած բոյսի արգանդից:  
Ցաւով է ծնւռում զաւակը մօրից —  
Քաղցր պտուղը վշտի, ինդութեան.  
Ցաւն է դառն արցունք քամում աչքերից  
Այրւող սրտերի բոցերի վրան:  
Ցաւ է կարկաչում ծնունդի ճիգով  
Ժայռի խոռոչում վտակը խեղդւած,  
Հին ցաւն է հեգնում ուրախ քրքիչով  
Երբ դուրս է ժայթքում կապանքից փրկւած:  
Ցաւ է մոնչում դարաւոր կաղնին  
Ծանը կացինի բիրտ հարւածներից,  
Այդ ցաւի ձայնը կեանք է շատերին. —  
Արշափ բախտեր են ծնւռում մի մահից...  
Երկիրը գալինան ցաւ է մրմիջում,  
Երբ յօշոտում է սուր խոփը նրան,  
Կեանքն այդ մրմունջից իր երգն է հիւսում —  
Մեծ երգը վշտի, նաև ցնծութեան:  
Ցաւ է սօսափում տերել դեղնած՝  
Մեղմ օրօրւելով ոստիկի վրան,  
Ցաւի երգ ունի քամին մոլորւած —  
Երգ լուռ վշտերի, մոալ գիշերւան:

Կոշտացած սիրտը վշտի երկունքով  
 Փափկում է ինչպէս ակօսւած երկիր,  
 Եւ ազնիւ սիրտը ցօղած արցունքով  
 Սրբազն յոյսն է ծլում անպատիր:  
 Թանձր ամպերը կախւում են վերում՝  
 Կենսատու անձրւ ուսերին շակած,  
 Դժբախտ երկիրը չեծում է վարում՝  
 Սաստիկ երաշտով խանձւած, պապակած:  
 Բայց երբ կայծակը բոցոտ ակօսով  
 Պատռում է կուրծքը թղպոտ ամպերին,  
 Ցողերն են իջնում զով կաթիլներով,  
 Նոր կեանք շնորհում տառապող երկրին:  
 Բնական ցաւից աւելի հզօր  
 Պուշմանը ցաւ է գրել մեր մէջքին.  
 Արինն է բռնել մեր դաշտեր ու ձոր,  
 Ցաւն է լոկ տէրը մեր դժբախտ երկրին:  
 Այս . . . Քանի՞ դարեր մեր մէջքը ծոինք,  
 Ուղեղ մէջքերս, մեր չար դուշմանին,  
 Ճակատնիս գետնին, չտեսանք երկինք,  
 Արցունք ու մոխիր մնաց մեզ բաժին:  
 Հայրենի հողը թրջինք արցունքով,  
 Մոխիր գլխներիս ցանեց թշնամին,  
 Մեր հպարտ մէջքը մի անգամ ծոինք,  
 Հարիւր տարիներ սողացինք գետին:  
 Հառաշանք, աղերս՝ ողջ իզուր անցան.  
 Գոռող յաղթողը չի նայում գետնին . . .  
 Վայ նրանց, որոնք ոտքի տակ ընկան, —  
 Ո՞վ չի տրորում սողացող ճիճուին:  
 Գետերն են կարմիր, մեր հողերը սև,  
 Մեր արցունքը ծով, բախտը վերացած,

Մեր ցաւերը խոր, խաւար մեր արև,  
 Հայրենիքը մեր երկունքով բռնւած . . .  
 Խաղաղ վաստակը կորաւ մեր երկրից,  
 Արեան, պայթարի ժամանակ հասաւ . . .  
 Թո՞ղ այս գարունն էլ անցնի մեր գլխից, —  
 Գարունն ի՞նչ պէտք է, երբ ցաւն է անբաւ:  
 Արիւնոտ հողի կուրծքը սևացած  
 Պողվատէ խոփն էլ անզօր է պատռել,  
 Այնտեղ, ուր սրով ոսկոր է փոււած,  
 Էլ ով կարող է հատիկներ ցանել . . .  
 Արիւնոտ հողի սևացած կրծքից  
 Լոկ փուշ ու տատասկ ծիլեր կ'արձակեն.  
 Արանց սև ծաղկի, սև թերթիկներից  
 Արէժի, թոյնի կաթիլներ կ'ընկնեն . . .

VI


Նոր զնդան ունենք կարծր պողվատից՝  
 Վառման հնոցի արդանդից վիժած.  
 Մուրճեր էլ ունենք՝ ծանը մէկ մէկից,  
 Բոլորն էլ հնոցի բոցերում զտւած:  
 Խաղաղ վաստակի արդ գործիքներով  
 Էլ չենք կոի մենք խոփ ու մանգաղներ.  
 Խոփերն իզուր են, ուր արիւնն է ծով  
 Ռով արեան հանդէպ թո՞ղ գործեն սրեր:  
 Մեղքը մերը չէ, անէծք դուշմանին,  
 Նա պարզեց գրօշ արիւնոտ մարտին:  
 Դէս, եկէք, որդիք . . . Հզօր մուրճերով  
 Զնդանի վրայ փշենք հին խոփեր,  
 Եւ փշրած խոփի այդ բեկորներով  
 Կռենք ու կոփենք հատու սուսերներ:

Մեղքը մերը չէ, անէծք գուշմանին,  
‘նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:  
Ահա Գուրգէնը հուրը բորբոքեց.  
Հարւեցէք որդիք, զնդանի բոլոր,  
Հին խոփն հնոցում դեղնեց ու փափկեց,  
Սուր պիտի կռենք, սրեր փառաւոր:  
Մեղքը մերը չէ, անէծք գուշմանին,  
‘նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:  
Զարիքի ձեռքից հեծող աշխարհում  
Սուրն է զօրավետ սրբազն դատին.  
Բախտի գաղտնիքը լոկ սուրն է լուծում,  
‘նա՛ է վերջ տալիս ցաւոտ օրերին:  
Մեղքը մերը չէ, անէծք գուշմանին,  
‘նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:  
Սերոք ջան, որդի, քո ծանր մուրճով  
Ամէնից առաջ դռն զարկ այս խոփին.  
Զնդանն ամուր է պատած պողվատով —  
Զա՛րկ անվախ, որդի, մատաղ քո թերին:  
Մեղքը մերը չէ, անէծք գուշմանին,  
‘նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին,  
Դէ՛հ, դուք էլ որդիք, զարկեցէք մուրճեր,  
Փշըցէք խոփը հաղար կտորով. . .  
Խոփին էլ կապւած սև բախտ, սև օրեր,  
Խոփը մեր կեանքը պատեց ցաւերով. . .  
Մեղքը մերը չէ, անէծք գուշմանին,  
‘նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին,  
Զարկեցէք, որդիք, փշըցէք խոփեր,  
Թող դժոխք գառնայ խաղաղ գործանոց. . .  
Խաղաղ վաստակի զուր են գործիքներ,  
Հոգիներս են հուր, մեր սրտերը խոց:

Մեղքը մերը չէ, անէծք գուշմանին,  
‘նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:  
Զարկեցէք, որդիք... Զեր մուրճի ձայնից  
Գոռ արձագանքով թող թնդան սարեր.  
Զարկեցէք, որդիք. փշըած խոփերից  
Մահու ու արեան կռենք գործիքներ:  
Մեղքը մերը չէ, անէծք գուշմանին,  
‘նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:  
Է՛յ, ինչ էք կանգնել վզերդ ծռած,  
Հողը ձեզ տանի, կոյր հարկաններ. . .  
Էլ արդարութիւն, պատիւ չմնաց, —  
Խոփերդ բերէք, կռենք սուսերներ. . .  
Մեղքը մերը չէ անէծք գուշմանին,  
‘նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին. . .

VII

‘Նայեցէք, որդիք, ես ծեր եմ, մաշւած.  
Ցաւոտ օրերի բազմաթիւ շարքեր  
Եկան ու անցան գլխովս յոդնած,  
Ճակտիս փռեցին ճերմակ ալիքներ:  
Ալիքներիս չափ տեսել եմ սեեր,  
Սև երկնքի տակ մեր սև աշխարհում,  
Որքան ճակատս ունի կնճիռներ,  
Այնքան վլէքեր են ծածկւած իմ սրտում:  
Անդուլ պայքարում կռացած մէշքով  
Այժմ քայլում եմ գէպի գերեզման,  
Եւ նոյն պայքարը շաղախած յուսով  
Առէք ձեզ իբր աւանդ սրբազն:  
Հին հին օրերից սև բախտի վճռով  
Խոփին ու սուսերը ընկեր են մարդին,



Խոսկը մենք առինք իր ծով քրտինքով  
 Սուրը գուշանին թողինք մենք բաժին:  
 Եւ բիւր տանջանքով անդուր անդադում,  
 Կուրձքը երկրի պատուեցինք ցաւով,  
 Անգութ թշնամին մեր իսկ կրծքերում  
 Իր սուրը միեց արեան ծարաւով:  
 Քանի քանի դար լուռ աշխատեցինք,  
 Վաստակը՝ թիւրբին, ցաւը՝ մեզ բաժին,  
 Դատ ու դատաստան երկնքին թողինք,  
 Երկինքը խուլ մնաց մեր հառաչանքին:  
 Արտում խօսի չկայ, դաշտերը խոպան,  
 Համր են կտրել մաճկալ հօտաղներ,  
 Եզներ ու արօր թշնամիք տարան,  
 Մեր չեն երկիրը մեզ աւեր թողին:  
 Դժոխն է պատել մեզ չորս բոլորից,  
 Ողջ փոթոթում ենք հազար բոցերում,  
 Զարիքով յղի երկինքը վերից  
 Մեր ցաւոտ կուրձքը սղմում է սղմում:  
 Աւերակների մոայլ կոյտերից  
 Ծիխ ոլորտը որպէս լուռ բոլոր  
 Քանի դարեր մեր դժբախտ վաթանից  
 Զգւում է դէպի երկինքն անողոք:  
 Ոճիքով հարուստ երկրի վրայ  
 Երկինքը միշտ հաշտ նայում է վերից,  
 Եւ տանջւող մարդի ցաւին անդատ  
 Ժպտում է արինոստ մշուշի միջից:  
 Երբ որ մեր այս ծով ցաւերի դիմաց  
 Երկինք ու երկիր հաշտ են, միաբան,  
 Հազար նախատինք ու նզովք նրանց,  
 Ում որ շրմունքներ աղօթք մըմնջան:

Նզովք երկնքին, իր ողորմութեան,  
 Որին միլիոններ զուր աղերսեցին,  
 Նզովք երկրին և իր գթութեան,  
 Որին խեղճերը զուր հաւատացին:  
 Հազար ու հազար նզովք ձեզ որդիք,  
 Թէ որ գէթ մի օր, մի ժամ, մի վայրկեան,  
 Հաւատաք մարդուն, կամ նայէք երկինք  
 Եւ ակնկալէք վերից փրկութեան:  
 Մեր համբերութիւնն էլ անուն չունի,  
 Ժայռերն են ձայթում մեր հառաչանքից.  
 Մեր կեանքը խաւար, մեր ցաւերն անհուն,  
 Զուր է գութ հայցել անգութ երկնքից:  
 2է, էլ չենք ու զում փորել շերիմեր,  
 Զարկեցէք, որդիք, քանի ուժ ունիք,  
 Թող որ փշրւին նաև այս բահեր,  
 Բահ էլ պէտք չէ, երբ որ արտ չ'ունիք:  
 Զարդեցէք նաև մեր այս մանգաղներ,  
 Ինչ որ պողվատ է թող սուսեր դառնար,  
 Աւեր, անապատ, խոպան են դաշտեր,  
 Փրկութիւնը մեզ լոկ զէնքը կը տայ:  
 Զարկեցէք, որդիք, պողվատի շերտեր,  
 Խնամքով զատենք փափուկ երկաթից,  
 Շեշտակի թափէք ուժին հարւածներ,  
 Զէնքերը ձուլենք լոկ կուռ պողվատից:  
 Զարկեցէք, որդիք, պողվատը փափկած  
 թող փուի, ձգւի ձեր հարւածներով  
 Ինչպէս թունաւոր օձը կատաղած:  
 Զգւում է առաջ օղակ օղակով:  
 Պողվատից կոած հատու սուսերներ  
 Քինու վրէժի թոյնի մէջ միենք,

Հին ու նոր արիւն, արցունք ու ցաւեր,  
Սուսերի հատու բերանով սրբենք:

VIII

Լսեցէք, որդիք, իմ խօսքը վերջին,  
Կուցէ և շուտով իմ յոգնած ձեռքից  
Ես վար կը ձգեմ մուրճն և ունելին,  
Կերթամ հանգչելու իմ բիւր ցաւերից:

Զեզ եմ կտակում զնդան ու հնոց,  
Մուրճեր, ունելիք և սուր կուոցներ,  
Նրանց հետ մէկտեղ սրտիս խոց ու բոց,  
Հոգիս փոթոթող հազար մի ցաւեր:

Ան արդ ցաւերը մի մասն են միայն  
Դժբախտ վաթանի ծով տառապանքի,  
Սրտիս կրակը մի կոյծն է միտյն  
Մեր խեղզ աշխարհը լափող հրդեհի:

Քանի չարիքը այսքան զօր ունի,  
Վիշտն ու արցունքը տէր են մեր երկրին,  
Քանի գուշմանը գութ, ամօթ չունի,  
Ցաւն է մնացել բաժին խեղճերին:

Դուք նւիրական այս գործանոցում  
Եր շինէք երբէք վաստակի գործիք  
Եւ ձեր մուրճերի ահեղ ձայներում  
Մարտի հրաւեր լսեն թող մարդիկ:  
Զարդեցէք անվերջ խոփ ու մտնդաղներ,  
Հազար կտորով փշրեցէք շղթան,  
Կուէք կոփեցէք հատու սուսերներ,  
Տէք ամէնքին գործիք փրկութեան:  
Էլ այսուհետեւ աւագ ուրբաթին  
Մի զարկէք երբէք սալին ձեր մուրճեր,

Մասիսի ալրում փակւած հսկային  
Թողէք որ մաշւին երկաթ-կապանքներ:  
Թողէք որ մըրոստ վատաբախտ արքան  
Դարերի ժանդով պատած շղթաներ  
Փշոի ու վերջ տայ իր չար գերութեան  
Ահեղ շառաչով դղոդի լեռներ:  
Անթիւ մուրճերով հաստացած կապեր  
Թողէք որ լիզեն շներն արքային,  
Լիզեն ու մաշեն երկաթէ օղեր,  
Խստասիրտ մի հօր վերջ տան նզովքին:  
Թող նա գուրս ժայթքի լերան արգանդից  
Որպէս սև զայրոյթ գարերով կուտած,  
Թող որ գուրս սողայ մութ անդունդներից  
Որպէս ահարկու վիշապ կատաղած:

Նրա էլ հոգին մեզ պէս դառնացած,  
Հաշիւ ու համար ունի աշխարհից,  
Նրա էլ սիրտը վերքերով պատած՝  
Բիւր ցաւեր ունի հին հին դարերից:  
Եւ ձեզ հետ մէկտեղ դառնացած արքան  
Թող շանթեր թափի գուշմանի գլխին,  
Դժբախտ ու խոպան դարձած մեր վաթան  
Աւերակներից ծնւի վիրստին:

Եւ երբ արիւնոտ մարտը դադարի  
Վեհ յաղթանակով սուրբ իրաւունքին  
Եւ կուում ընկած նահատակների  
Վառվառ յոյսերը մէկէն պսակւին.  
Երբ որ չարարախտ մեր հայրենիքից  
Խսպան վերանան ցաւերն ու չարիք,  
Եւ երբ վերստին երկինքը վերից  
Դէպի վար թափի վառ ճառագայթներ.

Երբ արիւնապատ մեր դաշտ ձորերում  
Կորէն ցնծութեամբ հնչւին ձեր երգեր,  
Մաճկալը պատռի ակօսն իր արտում,  
Հովին արօտ քշի իր հօտեր:  
Այս այն ժամանակ, այդ սուրբ օրերին  
Եկէք ու գտէք շերիմս կորած,  
Շուրջ բոլորիցէք իմ հողաթմբին,  
Ասացէք իմ ոսկորներին մաշւած՝  
“Հայր քնիր հանգիստ, քնիր յաւիտեան,  
” Այժմ երջանիկ, ազատ է վաթան.. .

## Ո Ւ Խ Ս Ա Խ Ո Բ Ք

(ՊԵՏՈՅԻ ԵՒ ԻՐ ԽՄԲԻ ՑԻՇԱՑԱԿԻՆ)

Կառաւկ մոռացութեան ամօթը Ճակտիս, անյաշ վրէժի  
զայրոյթը կրծքիս, սար ու ձոր անցած ու լատի եմ եկեր  
Եւ մէկիկ-մէկիկ ես կը համբուլնմ սուրբ շերիմները  
Նահատակների, թողութիւն կ'ուզեմ նրանց ստւերից,  
որ աղատութեան սրբազն մարտին ես անմասն եղար,  
ոս ապրում եմ դեռ.. .

Եւ լուռ գիշերւայ այս տիսուր ժամին, երբ մեռելները  
մեղմ փսփսում են և պատմում իրար իրենց վեշտ ու  
ցաւ, երբ մոռացութեան, ապերախտութեան խորունկ  
կսկիծը ցաւի երգ շննած՝ ողբ են մըմնջում՝ շերիմների  
տակ,—գլուխո զրած հողի թմբերին՝ ես ականչ կ'անեմ  
նրանց զբոյցին, անգիր կ'ուսանեմ նրանց շշուկներ և  
սրտիս վրայ բոցեղէն տառով ես կը գրօշմեմ մահու  
աշխարհից հնչող ձախները, ես կը հառաչեմ նրանց  
հառաչով, ես կը կսկծամ նրանց ցաւերով, ես լաց  
կը լինեմ նրանց արցունքով ապա անզգայ, քարսիրտ  
աշխարհին ցաւը կը պատմեմ նահատակների.. .

Լուռ է ամէն ինչ, գիշերը՝ խաւար, դաշտերը՝ մռայլ  
լեռները՝ համը, վասկն՝ անձան, քամիներն՝ զբոյց  
խաղաղութիւնը նորատկան է—այստեղ են հանգչում  
նահատակներին եւ նորատկան է—այստեղ են հանգչում

Հերիմ չկայ, թումբեր չկան, քար չկայ, անյիշատակ  
ու անզարդ, հսկայական դամբարան. . .

Դաշտ, արիւնու վայր. գիտեմ, դու տեսար այն աչեղ  
մարտը, ուր մէկը տասի գէմ, նզովք կարդալով և կակատագրին՝ մէկ-մէկ փուեցին իմ եղայրները՝ խեղձ  
հայրենիքի մօտիկ փրկութեան անհուն կարօտը ալրած  
սրտերում, անկատար իղձերի, վառ երազների ցաւը  
կրծքերում. . . Ասա, դաշտ, ուր, ի՞նչպէս ընկան նահա-  
տակները, ուր են նրանց սրբազան շիրիմները. . .

Լուռ է սկ դաշտը, գիշերը՝ խաւար, քամիներն՝  
անձայն:

Մեծ լոռութիւն, դուսար անհունի, դու, որ ոճիրն ու  
ազնիւ գործը միենոյն սիրով համբ խաւարի բիւրա-  
ծալ քողով ընդմիշտ ծածկելու տիուր գերն ունես,  
միայնութեան, խուլ անկիւնների, լուռ գիշերների մուռը  
սիրահար, որ անհուն դարուց, ով գիտէ ինչու քու  
անդայ ծոցում արիւնու գեպքի, անյայտ ցաւերի, ծածուկ  
արցունքի, կորած հառաջէ, անզօր զայրոյթի գալտնիքն  
ունես, — գու տեսար մի օր այս սկ դաշտերում, ինչ որ  
աշխարհում ոչ ոք չտեսաւ. Դու ասա գոնէ, ի՞նչպէս  
ընկան նահատակները և ուր են նրանց սուրբ շիրիմները. . .

Լուռ է ամէն ինչ խաւար՝ խեղզող վտակը՝ համբ:  
Դարահիսար լեռ, անէծքի անուն, քո կանաչ մէջքին  
այն սկ գիշերում գու ըսոսրային ծիրանի առար, խոչ  
ու խոռոշներ և մերկ կողերդ ալ-կարմիր քողով մէկէն  
պատեցիր. Բէ որ խոր ցաւից, անհուն ամօթիդ բարդ-  
բարդ սմզերով չէիր պատել գեպդ, ասա դու ինձ,  
լեռ, քո ոք ժայռի տակ լուռ ընկաւ զետօն, որտեղ  
պառկեցին իր ընկերները. . . Դու միայն էիր քո սուերի  
հետ լուռ յուղարկաւոր նահատակներին, ասա, լացեցիր

ուժասպառ գետին թաւալւում, կրկին վեր կենում, կրկին  
գալարւում վիրաւոր օձի պէս թշնամու մարմնով և  
վե չն անգամ փուլում էր գետին՝ կուրծքը պատառւած,  
անյոյս, անկենդան. . . Այսպէս ընկանը մեր, և մեր  
կոչերին ոչ ոք ձայն տւեց, մեր աղաղակներին ոչ մի  
արձագանք, բացի լեռներից և սկ ժայռերից. . . Թող  
թող մեզ գնա և մի խոռվիր դու մեր հանգիստը. . .  
“Ուխտի ես եկել. . . Ինչո՞ւ չհասար այն ահեղ  
ժամին, երբ մենք ուժասպառ, յոգնած, վիրաւոր ընկնում  
էինք զէնքով կամ անզէն, տասնեակ գնդակից սրտերս  
խոցւած. . . Ուր էիր, երբ զէնք, զէնք աղերսեցինք, երբ  
որ անփամփուշտ մեր հրացաններ ժայռերի վրայ մէկ-մէկ  
փշօեցինք, երբ իրը վահան՝ կըծքերս ունէինք և հատու  
շոյն մեր բազուկները, երբ լալիս էինք անզօր զայ-  
ր, մեր առաջ, ինչպէս ոչխարի հնազանդ հօտեր. . . Այն  
սրերի առաջ, ինչպէս ոչխարի հնազանդ հօտեր. . . Այն  
չհասական, այն ահեղ ժամին, ասա, ուր էիր, ինչո՞ւ  
լուռ կացար. . . Թող, մի խոռվիր դու մեր հանգիստը,  
անցիր ու գնա. . .

“Իւր եւ փնտում խուլ ամբութեան մէջ մոայլ  
դաշտերի, ուր լահն է իշխում և լուռ գերեզման, ուր  
ցաւն ու վշտեր լարած են ընդմիշտ մեր կեանքերի հետ,  
որ քամին անգամ զգով և սուրճ, ուր թաշունենք  
էլ ահապ են անցնու. . . Թուլ մեր հեռացիր. Դան  
ուժամասները, ուր մէրքն է միամ նառունկ ցաւերով  
սրցունքն է հեղեղ, հառաջանքն անփերը թողութիւն ես  
ուղում. . . Երբ որ կը սրբես լացող աչքերը, երբ որ  
կը սփոփես այրւած սրտերը, երբ մենակ կանես այն,  
ինչ մեզ հետ չարիր, — այն ժամանակ արի և ասա.

“Թողութիւն տւե՛ք”... Ա՛յ այն ժամանակ հազար  
տեղերից, հազար ձայներով հազար ձորեր և հազար  
քարեր քեզ մէկէն կ'ասեն — “հազար երանի քեզ”:  
Եւ թէկ անշիրիմ ու անիշտատակ, մենք էլի կը քնենք  
հանգիստ յաւիտեան”...

Եւ լուռ անցնում եմ արիւնոտ դաշտով, քայլում  
եմ անվերջ յառաջ ու յառաջ — այնտեղ ուր վէրբն է  
մխում ցաւերով, ուր արցունքն է հեղեղ հառաջանքն  
անվերջ և արիւնը ծով...

Նահատակ ընկերներ, արգեօք դեռ երկար պիտի  
սպասէք իմ վերադարձին...

## Հ Յ Յ Գ Ո Ւ Խ Կ Ի Ն Ո Ր Տ Ա Ր Ի Ն

Լուռ. մի՛ մրմնջար. քայլիր հանդարտ, ընկեր, տղա-  
մարդի կրծքից թռած հառաջը ժափիտ է բերում չար  
բախտի դէմքին: Զիւնոտ այս լեռը պիտի անց կենանք.  
չէ միւս կողմից է բերում մեզ քայլն ողը ու հառաչի  
աղեխարշ ձայներ. այնտեղ կ'ասես ձորերն են տնբում.  
սղմիր հրացանդ թարմ վէրքիդ վրայ, պինդ, պինդ, և  
առաջ քայլենք: Նոր տարին մօտ է. չլինի թէ նա հասնի  
և մեզ թոյլ ընկճւած, յուսահատ տեսնի: Տես, երբ այն  
սիրուն աստղը պլան արս բարձր լերան կատարին  
հասնի, այ, այն ժամանակ նոր տարի կը լինի...

Վերելքը ծանր է, մեր ճամպան երկար, բայց շատ  
ենք անցել: Լուռ քայլիր, ընկեր, առաջդ լաւ նախիր.  
ձեանը չհաւատաս. ինչպէս երբեմն սրտերի քէնը,  
չոգիների թոյնը մարդիկ ծածկում են նենդ ժպիտների  
խարուսիկ քօղով, այգպէս էլ ձիւնի սպիտակ սաւանը  
պաղ գեղեցկութեան դաւաճան քօղի տակ անդունդ է  
ծածկում մեր ոտքերի տակ: Այսքան քայլել ենք և ի՞նչ  
օրերով — մեղք է, որ յանկարծ նոր տարուն մօտիկ կուլ  
գնանք այստեղ մի խորխորատում: Տես, աստղը հեռու չէ  
լեռան կատարից. էլի մի փոքր և նոր տարի կը լինի...

Ի՞նչ ցուրտ է, ընկեր, գիտեմ, մըսում ես: Դէ մենակ  
մենք չենք. քանի՛ քանիսները մեզ պէս մըսում են, դողում,  
սարսում: Ճմեռ է պատել մեր ողջ երկերը. որբեր,  
այրիներ գողում են ցրտից, ծերերն էլ իրենց չորցած  
բազուկներ կծկած ծոցերում՝ դողում են, դողում:

ում որ միսը չի գողում, ում պարարտ մարմինը պատած է ոսկի-արծաթ զրահով, նրա էլ հոգին է մրսում, դող դողում, նրա էլ սիրտն է սարսում ահից: Եթէ որ մենք էլ նրանց պէս դողանք, էլ ով պիտի դիմաւորի նոր տարուն: Տես, աստղը մօտ է լեռան կատարին, և նոր տարին հեռու չէ մեղնից...

Էլի մրմիջացիր, ցաւում է վէրբդ կեցիր, իմ ընկեր, թող որ իմ շնչով մի փոքր փեճմ, տաքացնեմ նրան: Հաւատա, ընկեր, մատերմի շունչին, նա փրկարար է, վէրբ է բժշկում, հոգի է տալիս, սիրտ է տաքացնում, բոցեր է վառում: Թող թող որ փչեմ այդ վէրբիդ վրայ. Հաւատա, հոգիս, այդ զօր ձար է, այ այս լաթովս էլ կը կապեմ վէրբդ... Եյսպէս լաւ է, այժմ հանդիսու ես. դէ՛ բռնիր հրացանդ. փողը գեռ տաք է, պինդ ողմիր ձեռքիդ. Լաւ չէ, որ նոր տարին քեզ տեսնիանզէն և անհրացան: Տես, աստղը մօտ է. Էլի մի փոքր և նոր պարի կը լինի...

Մուալ է չորս կողմներս, խաւարը թանձր. լուռ է ամէն ինչ ասես մեռել է ողջ տիեզերը. սարսափն է խաղում աշխարհի վրայ, մարդիկ վախում են ձայն տալ իրարի, նոյնիսկ մոռացել են, թէ նոր տարի է գալիս. ցաւերի մէջ բեռը մէջքերին դրած՝ արիւնոտ շրթունքներով ժպտում են երկիւղից բռնութեան դէմքին և սարսափի հանգստի մահարեր ծոցում լռել են, միջել և սպասում են. . . Ինչի. . . Հրաշքի. . . Անմիտի գլխին՝ բարիքով ամուլ ու չար երկնը միայն շանթ ու փոթորիկ ունի: Եթէ որ մենք էլ նրանց պէս լռենք, ով պիտի դիմաւորի նոր տարուն: Դէ՛ քայլիր, ընկեր...

Տես, տես, սիրելիս, ինչ հանգարտ, վստահ սահում է աստղը երկնի վրայ, ցոլքերը պայծառ, շողերն իստակ, ասես լողում է անսահմանութեան մէջ՝ մարդկանց ցոյց

տալու, թէ ի՞նչ ասել է ազատ, անկախ կեանք. նրան չեն համնում վարի մռալին ու սկ խաւարը. նա չդիտէ՝ ինչ ասել է շղթայ. բռնութիւնը չի կարող նրան կանգնեցնել. Հպարտ պատում է խաւարի քօղը և առաջ գնում: Ով կ'ուզի լինել նրա պէս ազատ, նրա պէս անկախ, թող շուտով պատոի քօղը բռնութեան և առաջ գնայ: Քայլենք գէպի վեր. կատարը մօտ է, և հէնց այնտեղ էլ տօնենք նոր տարին մեր հրացանի ահեղ որոտով...

Դեռ արշալոյս էր, երբ. Ճամբայ ընկանք: Քանի հոգի էինք. այժմ մնացել ենք երկուսով միայն: Որքան ենք քայլել ծանը էր ճանապարհը. ստոր մատնութիւնը բռնութեան արիւնոտ թաթիցը բռնած քայլում էր ու շով մեր յետևից. որքան զո՞ւ տիւնիք. բուքն ու փոթորիկը խլեցին տարան. ցուրտն ու խաւարը մէկն կուլ տւին. . . Մենք ենք մնացել, մենք զոյդ ըմբուտներ, ի՞նչ փոյթ թէ քիչ ենք. ամէն ընկնողի վերջին հառաչից մենք հիւսել ենք մեր վայրենի երգը. նրանց զայրոյթի թունոտ կաթիլներով մենք համեմել ենք մեր ատելութիւնը չար բռնութեան դէմ. նրանց մէծ սրտի սրբազն բոցից մի մի շիթ նլած մեր խիզախ ողու թեւերն ենք հիւսել և սլանում ենք վրէմի շնչով՝ ուր կանչում է մեզ նւիրական պարտքը. մենք կը չանդուենք յուսահատութեան խոպան, կոշտացած հազոր և նրա կրծքին կը ցանենք յուսոյ սերմերը արիւնոտ ձեռքով... Դէ՛հ. քայլիր, ընկեր: Մօտ է աստղը: Տես, երբ նա այս լեռան կատարին հասնի, այն ժամանակ կէս գիշեր կը լինի, նոր տարի կը լինի...

Կանգ առ մի փոքր: Այս ի՞նչ պատահեց. խաւարը սաստկացաւ, տես, ընկեր, աստղը ծածկւեց կատարին չհասած. այն մռայլ ամպը իր սկ ծոցի մէջ կուլ տւեց նրան: Մօտալուտ տարուայ պլազան նշանն՝ էլ չենք տես-

նում. էլ կայ այս երկրում մի ուրիշ նշան, որ մենք  
իմանանք նոր տարու մուտքը: Ե՞րբ կը գայ նա և ե՞րբ  
կ'անցնի, այդ մենք այլևս գիտենալ չենք կարող քանի՛  
տարի է, որ մենք չգիտենք, թէ ինչպէս գալիս է ու  
անցնում նոր տարին. Թո՛ղ այս էլ անցնի, գնա՛ մեր գլխով:  
Բռնութեան ճիրաններում կեանքը մեր երկրում գարձել  
է արիւնոտ ժամերի մի շաբք. ինչ ասել է այստեղ՝ նոր  
տարի, երբ օրերը սև են, հողերը կարմիր... Խաւարը  
թանձրացաւ. մոայլը Ճնշում է. ցուրտը սաստկացաւ,  
ասես ժայռերն էլ են ցրտից գողդողում... Աչա և  
լեռան կատարը. Հասանք վերջապէս: Տես այնտեղ  
ներքեում սև սև ստւերները. գիւղեր են նրանք. լուռ  
են ու մեռած. աստղի նոր տարին չի կարող տալ նրանց  
յոյս, կենդանութիւն. երկնքից իջնող լուսոյ շողերը միշտ  
փոփոխական են և անհաստատ, ինչպէս երկնքից իջած ձրի  
շնորհը, որով դեռ ոչ ոք երջանիկ չի եղել երկրիս երեսին...

Փոյթ չէ այդ, ընկեր. իջնենք վար շուտով. Թողնենք  
երկինքը հանգիստ իր տեղում. Հրացանի որոտով պատ-  
ռենք խաւարը. գնդակի որոտով խոռվենք հոգեհան այս  
լրութիւնը. Խօսենք այն լեզով, որ ամենասոսկալին է  
բռնութեան համար, ազատութեան լեզով որոտի լեզով.  
շանթերի լեզով. կուի գոռոցի մէջ խեղենք բռնութեան  
լզերը քբքիջը. քանդենք այս գիւղերի լեզուի կապանքը.  
մի փոքրիկ կայծ դնենք նրանց շրթունքներին. մի փոքրիկ  
բոց դնենք նրանց սրտերում. չորացնենք այնտեղ լացի  
աղբիւրը. և այն ժամանակ մենակ չենք մնայ. և այն  
ժամանակ կը գայ Նոր տարին, մեր փրկարարը.  
փոյթ չէ՝ թէ աստղը ծածկւի ամպերով. փոյթ չէ, թէ  
երկինքը կորչե խաւարում...

### 3. Յ. ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Ապստամբական ոգի (սպառւած):
2. Յեղափոխական կեանքից (սպառւած):
3. Գալոտնի տպարան (սպառւած):
4. Գիտական սօցիալիզմ. Փ. Էնգելս:
5. Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր:
6. Կուկունեանի խմբի արշաւանքը:
7. Արքույթի յիշատակին (չորս չառւած):
8. Հ. Թաշնակցութեան ծրագիր (արևմտ. բառ.):
9. Homo homini լրս (զրոյց) և Քրքիջներ (ազատ բանաստեղծութիւն). Վարդգես:
10. Խրիստասարդներին. Պ. Կրապօտկին:
11. Ազատութեան ձանապարհին. Ղարիբ, I գրքոյկ:
12. Ազատութեան ձանապարհին. Ղարիբ, II գրքոյկ:
13. Ամբոխային տրամարանութիւն:
14. Ազատութեան ձանապարհին. Ղարիբ, III գրքոյկ:

„Դրօշակ“-ի խմբագրութեան մէջ ծախւում է նաև  
„Սօցիալիզմ“ և սօցիալական շարժումը 19-րդ դարում“.  
Ա. Զամբարտ. Հրատարակ. Ժընէլի Հայ ուսանողների:

5508

2013

